ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

18.12.2024

Խորհրդի նիստի անցկացման վայրը՝ ՀՀ ԱՆ խորհրդակցությունների դահլիճ:

Խորհրդի նիստի սկիզբը՝ 16:00:

Խորհրդի նիստի ավարտը՝ 18:00:

Հասարակական խորհրդի նիստին ներկա մասնակիցներ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ) – Անահիտ Ավանեսյան:
2. «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն – Նվարդ Փիլիպոսյան (ներկայացուցիչ):
3. «Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն –Վիոլետա Զոփունյան:
4. «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն – Անի Երեմյան:
5. «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն – Ալլա Հարությունյան (ներկայացուցիչ):
6. Մանկական բժիշկների հայկական ասոցիացիա – Եվա Մովսեսյան:
7. Միքայել Մացակյան:
8. Անահիտ Պապիկյան:
9. «Վիվա» բարեգործական հասարակական կազմակերպություն – Տատյանա Հովհաննիսյան:
10. «Հեմոֆիլիայով և տրոմբոֆիլիայով հիվանդների հայկական ընկերություն» – Տանյա Խաչատրյան:
11. Նվարդ Քոչարյան:

12. «Վստահություն» առողջապահական հասարակական կազմակերպություն – Սուսաննա Հարությունյան:
13. «Կենսաբժշկական սարքավորումների մասնագետների ասոցացիա» – Էդգար Հայրապետյան:

Հասարակական խորհրդի նիստին բացակա մասնակիցներ

1. «Մեգանյուզ.ամ» լրատվական կայք – Մարգարիտ Դավթյան (հարգելի):
2. «Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ – Արմեն Մինասյան (հարգելի):
3. ԱՄՆ Խաղաղության Կորպուս – Հայաստան – Նաիրա Ղարախանյան (հարգելի):
4. Էրիկ Գյուլազյան (հարգելի):

Նիստին հրավիրված մասնակիցներ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ – Արմեն Գասպարյան:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ – Արտակ Ջումայան:
3. Հանրապետական շտապօգնության ծառայության տնօրեն Սահակ Հակոբյան:

Ելույթներ

Ողջունելով խորհրդի անդամներին՝ նախարարը կարևորել է առողջապահական բարեփոխումների ընդհանուր ուղղվածության մասին հասարակական հատվածի հետ քննարկումները, նրանց դիտարկումները լսելը և կառուցողական ու բաց երկխոսությունը:

Հանրապետական շտապօգնության ծառայության տնօրեն Սահակ Հակոբյանը ներկայացրել է 2024 թվականի հունվարին մեկնարկած՝ Հանրապետական շտապօգնության (ՇՕ) ծառայություն ստեղծելու ուղղությամբ աշխատանքները: Նա մանրամասնել է, որ օգոստոսին Գյումրու կայանի բազայի հիման վրա ստեղծվել է

Հանրապետական շտապօգնության 1-03 զանգերի ընդունման օպերատիվ կառավարման կենտրոնի հյուսիսային մասնաճյուղը, որն իր տեխնիկական հնարավորությամբ համապատասխանում է անխափանելիության բարձր մակարդակի, ապահովված է զանգերի ընդունման, մշակման և փոխանցման ժամանակակից լուծումներով և ներկայումս սպասարկում է հյուսիսային մարզերի՝ Շիրակի, Արագածոտնի, Լոռու, առաջիկայում նաև՝ Տավուշի զանգերը: Միաժամանակ, բջջային օպերատորների հետ գույքագրվել են զանգերի ընդունման և փոխանցամն խնդիրները և տրվել են համապատասխան լուծումներ:

Առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Ջումայանը խոսել է ընտանեկան բժշկության ինստիտուտի կայացմանն ուղղված աշխատանքներից, գյուղական ամբուլատորիաների կազմակերպահրավական փոփոխություններից, որի արդյունքում կլուծվեն վարչական կառավարման, այդ թվում՝ կադրային, տարատեսակ խնդիրներ:

Մասնավորապես, ներկայացվել է գյուղական ամբուլատորիաների նոր մոդելը, որով խոշորացվում են՝ միավորվելով մեկ իրավաբանական անձի շուրջ, որի շրջանակներում վարչական մասը տարանջատվում է ընտանեկան բժիշկներից և դրվում մեկ այլ աշխատակցի՝ տնօրենի վրա, իսկ ընտանեկան բժիշկը զբաղվում է միայն իր բժշկությամբ և պատասխանատու է լինում իր բժշկական գործընթացի համար: Վարչական մասը կենտրոնանում է մեկ տնօրենի վրա, որը կզբաղվի միայն վարչական մասով: Ինչպես նաև առաջարկվում է այս մոդելի մեջ ներառել լրացուցիչ բուժծառայություն՝ ուլտրաձայնային հետազոտության, նաև՝ լաբորատոր գործիքային հետազոտությունների կենտրոնացում, որտեղ գյուղական աբուլատորիաներում կմնա այն լաբորատոր հետազոտությունը, որը արագ թեստերով հնարավոր կլինի կատարել հենց տեղում:

Միաժամանակ, նշվել է, որ ընտանեկան բժիշկների և բուժքույրերի համար նոր գործառույթներ են մշակվում, որից հետո գործող ընտանեկան բժիշկների ու բուժքույրերի համար կլինեն կարճաժամկետ՝ մինչև 6 ամիս, վերապատրաստումներ:

Հարցեր և առաջարկություններ

Խորհրդի անդամներն իրենց դիտարկումներն ու առաջարկություններն են ներկայացրել Հանրապետական շտապօգնության (ՇՕ) ծառայության հարթակում

անձնական տվյալների գաղտնիությունն ապահովելու կարևորության վերաբերյալ, առաջարկել են կազմակերպել շտապօգնության բրիգադներ, որտեղ ներգրավված կլինեն նաև մանկաբույժներ, ստեղծել աշխատանքային խումբ՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց տեղափոխումը շտապօգնության մեքենաներով ճիշտ կազմակերպելու համար: Հարցադրումներ են արել նաև ընտանեկան բժիշկների իրավունքների վերաբերյալ, անդրադարձել ամբուլատորիաների բժիշկների աշխատավարձերի վերանայմանը: Խորհրդի անդամներն առաջարկել են նաև իրենց մասնակցությամբ ընդլայնել վերապատրաստման դասընթացների կազմակերպումը՝ մարզային բժիշկների կրթությունն ապահովելու համար:

Ամփոփում

Ամփոփելով նիստը՝ խորհրդի նախագահ Անահիտ Ավանեսյանը շնորհակալություն է հայտնել գործընկերներին կառուցողական, ակտիվ և արդյունավետ քննարկման համար, կարևորել բարձրացված հարցերը, որոնց վերաբերյալ բանախոսները ներկայացրել են ամփոփ պարզաբանումներ:

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան

ԱՆ հասարակայնության հետ
կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյան